ԿԼԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՐՔԱՆ

ՀԵՐՈՍԻ ՎԵՐԵԼՔԸ

Bookmark

David Remnick

KING OF THE WORLD

Muhammad Ali and the Rise of an American Hero

Bookmark

Դեյվիդ Ռեմնիք

ՎԼԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՐՔԱՆ

ՀԵՐՈՍԻ ՎԵՐԵԼՔԸ

Թարգմանությունն անգլերենից՝
Լիանա Զաքարյանի

ԵՐԵՎԱՆ
2019

Bookmark

ՀՏԴ 796.83
ԳՄԴ 75.713
Ռ 316

Ռեմնիք Դեյվիդ
Ռ 316 Մուհամեդ Ալի. աշխարհի արքան: Հերոսի վերելքը/ Դեյվիդ Ռեմնիք; Թարգմանությունն անգլերենից՝ Լիանա Զաքարյանի.- Եր.: newmag, 2019.- 568 էջ:

Մուհամեդ Ալին, որը դեռ հայտնի էր որպես Կասիուս Քլեյ, 1964-ի փետրվարի 25-ին ռինգ մտավ Սոնի Լիստոնի հետ: Ալիին համարում էին նյարդայնացնող ու տարօրինակ մարզիկ, որը մենամարտում էր պարելով ու չափազանց շատ էր խոսում: Վեց ռաունդից հետո Ալին ոչ միայն ծանր քաշային կարգում աշխարհի բացարձակ չեմպիոն էր, այլև «նոր տեսակի սևամորթ», որը կարճ ժամանակ անց վերափոխելու էր Ամերիկայի ռասայական քաղաքականությունը, զանգվածային մշակույթը և հերոս լինելու մասին պատկերացումները:

Ոչ ոք չի կարողացել Դեյվիդ Ռեմնիքից ավելի վառ, դրամատիկ ու խորապես նկարագրել Ալիին և նրա ժամանակաշրջանը, որին նա շունչ ու ոգի է տվել: Պատմելով Ալիի անցած ճանապարհի մասին՝ Լուիսվիլի, Կենտուկիի մարզադահլիճներից մինչև Սոնի Լիստոնի և Ֆլոյդ Պատերսոնի հետ պատմական մրցամարտերը, Ռեմնիքը ստեղծել է նմանը չունեցող հարուստ կտավ: Նա հիանալիորեն կարողանում է փոխանցել սուր լեզու ունեցող մարզական լրագրողների և մարդասպան գանգստերների, մռայլ Լիստոնի, վախեցած Պատերսոնի, հանդուգն Նորման Մեյլերի և առեղծվածային Մալքոլմ Իքսի կերպարները:

«Աշխարհի արքան» գիրքն արժանին է մատուցում բոլոր ժամանակների մեծագույն մարզիկին և հզոր էներգիայով օժտված անձանցից մեկին՝ ընդգծելով նրա արագությունը, վայելչությունը, քաջությունը, հումորի զգացումը և հզոր ոգին:

ՀՏԴ 796.83
ԳՄԴ 75.713

ISBN 978-9939-9196-9-0
Դեյվիդ Ռեմնիք «Ալի. աշխարհի արքան» © newmag, 2019
Գիրքը թարգմանվել և հրատարակվել է The Robbins Office, Inc. և Aitken Alexander Associates Ltd. Ընկերությունների թույլտվությամբ:
David Remnick. King of the World. Muhammad Ali and The Rise of an American Hero
Copyright © 1998 by David Remnick
Published by arrangement with The Robbins Office, Inc. and Aitken Alexander Associates Ltd.
Շապիկի լուսանկարը՝ Stanley Weston/Getty Images

Գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել «ԱՐԻ» գրական գործակալության միջոցով:

ՆԱԽԱԳԾԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐ

Ինչու է պետք կարդալ այս գիրքը

Մարզաձևերում լինում են անհատականություններ, որոնք տարիների ընթացքում դառնում են խորհրդանիշ, ոգեշընչման աղբյուր: Այդպես, ֆուտբոլում Պելեն է, բասկետբոլում՝ Մայքլ Ջորդանը, գոլֆում՝ Թայգեր Վուդսը: Նրանց հռչակը կապված չէ միայն մարզական ժառանգության հետ. նրանք դաստիարակել են սերունդներ, ավելի պոպուլյար դարձրել մարզաձևը, սովորեցրել ունենալ բիզնես մտածողություն և դա զուգահեռել հաջողակ կարիերայի հետ: Բռնցքամարտում այդ բացառիկի տեղն ու անունը պատկանում են Կասիուս Քլեյին, նույն՝ Մուհամեդ Ալիին:

Ալիի անցած անհավանական ճանապարհը, գրքում նկարագրվող պատմությունները, մենամարտերի նախապատրաստական աշխատանքներն ու մենամարտերից հետո հընչած արձագանքները, հերոսներն ու սկանդալները լավագույն կերպով պատմում են, թե ինչպես է մարզաձևն ԱՄՆ-ում պոպուլյար դարձել: Ալին միայն բռնցքամարտիկ չէր. նա շատ ավելի հիմքային՝ կրոնական, ռասայական, քաղաքական խնդիրներ էր բարձրացնում: Նա օրինակ էր՝ ինչպես կարելի է հաջողել սպորտում, շատ փող վաստակել և այդ ամենին

զուգահեռ չկորցնել համեստ մարդ լինելու գլխավոր հատկանիշը: Նա հավասարություն պահպանելու ուղերձներ էր տարածում, բռնցքամարտը քարոզում էր որպես ոչ միայն առողջ ապրելակերպ, այլև որպես սևամորթների ու սպիտակամորթների մեջ հավասարություն մտցնելու հույժ կարևոր գործիք:

Այս գիրքը բռնցքամարտի սիրահարների համար ոգեշընչման մեծ աղբյուր կլինի, կսովորեցնի մարզական կարիերայի շատ նրբություններ, կպատրաստի ծանր կարիերա ունենալու դառը փորձություններին և կօգնի հաջողությամբ դուրս գալ սպորտում հաճախ հանդիպող ծանր փորձություններից: Ալիի մենամարտերի տեսագրությունները, նրա անվան շուրջ պտտվող լեգենդները, նրա փայլուն տեխնիկան, հարվածների ուժգնությունը ոգևորել են միլիոնավոր բռնցքամարտիկների, որոնք ընտրել են այս մարզաձևն ու դարձրել ավելի հետաքրքիր: Կարծում եմ՝ այս գիրքը մեծ արժեք է բռնցքամարտի հայ սիրահարների համար. մարզիկներն ու մարզիչներն այս գրքից կարող են մասնագիտական մեծ գիտելիքներ քաղել:

Արթուր Գևորգյան

Բռնցքամարտի Հայաստանի
ֆեդերացիայի նախագահ

Bookmark

Բովանդակություն

	Նախաբան	11
Գլուխ 1	Ընդհատակում ապրողը	27
Գլուխ 2	2 րոպե, 6 վայրկյան	71
Գլուխ 3	Պարոն Ֆյուրին և պարոն Գրեյը	99
Գլուխ 4	Ջախջախիչ պարտություն	143
Գլուխ 5	Հեծանվի գողը	159
Գլուխ 6	20-րդ դարի հարստությունը	191
Գլուխ 7	Գաղտնիքներ	237
Գլուխ 8	Իրարանցում	271
Գլուխ 9	Խաչ ու մահիկ	299
Գլուխ 10	Արջաորս	317
Գլուխ 11	«Կերեք ձեր բառերը»	333
Գլուխ 12	Կերպարանափոխում	369
Գլուխ 13	«Փրկի՛ր ինձ, Ջո Լուիս...»	395
Գլուխ 14	Հրազենային կրակոց	419
Գլուխ 15	Խարսխաձև հարված	451
Գլուխ 16	Ինչ կա անվան մեջ	477
	Վերջաբան	507
	Հետգրություն	547
	Տեղեկության աղբյուրներ և երախտիքի խոսք	553

Bookmark

Նախաբան

Միչիգանում

Կասիուս Քլեյը[1] **Մայամի Բիչում ռինգ դուրս եկավ՝** հագին սպիտակ կարճ թիկնոց՝ մեջքին ասեղնագործած Lip[2]: Նա նորից հիասքանչ էր: Արագաշարժ էր, կոկիկ ու 22 տարեկան: Նա վախենում էր կյանքում առաջին ու վերջին անգամ: Ռինգը լի էր նախկին ու ապագա չեմպիոններով, նրանց օգնականներով ու մոպս ցեղատեսակի շներով: Քլեյը ոչ մեկին ուշադրություն չէր դարձնում: Նա սկսեց ցատկոտել ոտնաթաթերի վրա՝ հոգնած պարողի նման ոտքերը ստիպողաբար քստքստացնելով, հետո սկսեց ավելի արագ ու հաճույքով շարժվել: Մի քանի րոպե անց բռնցքամարտի ծանր քաշային կարգում աշխարհի չեմպիոն Սոնի Լիստոնը[3] ռինգ մտավ՝ զգուշորեն անցնելով ճոպանների արանքով, կարծես ցանկանում էր մի կերպ խցկվել մակույկի

---

[1] Cassius Marcellus Clay, Jr. – Կասիուս Մարցելուս Քլեյ Կրտսեր, Մուհամեդ Ալիի անունն է մինչև անվանափոխությունն ու իսլամ ընդունելը: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

[2] Louisville Lip – Մուհամեդ Ալիի մականունը:

[3] Sonny Liston – Սոնի Լիստոն (անհայտ-1970), ամերիկացի բռնցքամարտիկ, մենամարտել է 1953-1970 թթ.: Նա անպարտելի էր մինչև 1964 թ., երբ նրան հաղթեց Մուհամեդ Ալին: 54 մենամարտում ունեցել է 50 հաղթանակ, 4 պարտություն:

սպասուհին նրան գտել է կաթվածահար՝ գետնին ընկած: Դրանից 3 շաբաթ անց նա մահացել է:

– Տեսնո՞ւմ ես, դու տեսնո՞ւմ ես ինձ,– շշուկով նորից ասաց Ալին:

Ահա և նա իր մարզչի՝ Անջելո Դունդիի և կլորերես ու երիտասարդ Բունդինիի կողքին, որն Ալիի ականջին ոգևորող տողեր էր շշնջում. «Ամբողջ գիշեր սավառնիր թիթեռի նման ու խայթիր մեղվի պես: Առաջ, երիտասարդ, առաջ»:

– Ես միայն մեկ անգամ եմ վախ զգացել ռինգում,– ասաց Ալին,– Սոնի Լիստոն, առաջին անգամ, առաջին ռաունդ: Ասաց, որ սպանելու է ինձ:

Ալին հիմա ծանրաշարժ էր: Նա մարզիկին բնորոշ քամահրանք էր զգում մարզվելու հանդեպ ու պետք եղածից շատ էր ուտում: Մորուքը սպիտակ էր, մազերի մեջ էլ տեղ-տեղ սպիտակ փնջեր էին նշմարվում: Գնացել էի Միչիգան նրան այցի, քանի որ ցանկանում էի գրել այն մասին, թե ինչպես է նա ինքն իրեն կերտել 60-ականների սկզբին, ու թե ինչպես է Լուիսվիլից եկած նվազ տղան դարձել ամերիկյան ամենաէքսցենտրիկ կերպարներից մեկը, որն իր դարաշրջանը կերտողն է ու դրա արտացոլումը: Որպես Կասիուս Քլեյ, նա բռնցքամարտի աշխարհ մուտք գործեց այն ժամանակ, երբ սևամորթ մարզիկից ակնկալվում էր հնազանդ լինել՝ ամենայն հարգանք տածելով սպիտակամորթների զգացմունքների հանդեպ: Ենթադրվում էր, որ հարավային նահանգներում տարածված ռասայական խտրականության ու հյուսիսում ընդունված երեսպաշտության պայմաններում նա պետք է ազնիվ ու երախտապարտ մարտիկի դեր խաղար: Որպես մարզիկ, նա պետք է հեռու մնար ռասայական ու քաղաքական ցնցումներից: Իսկ դրանք շատ էին, օրինակ՝ 1960-ին

1964-ի փետրվարի 25-ի երեկոյան Մալքոլմ Իքսը[1]՝ Քլեյի հյուրն ու մենթորը, նստած էր ռինգի կողքին՝ 7 համարի նըստարանին: Ջեքի Գլիսոնն ու Սեմի Դևիսը ևս ներկա էին Լաս Վեգասի, Չիկագոյի ու Նյու Յորքի գանգստերների հետ: Սիգարի ծխից գոյացած ամպը սահում էր ռինգի լուսարձակների շողերի միջով: Կասիուս Քլեյը նախավարժանք էր անում մոխրագույն լողացող մշուշում ու սպասում գոնգի[2] հնչելուն:

Տեսնում ես, ինձ տեսնում ես

Մուհամեդ Ալին, փափուկ բազկաթոռին նստած, իրեն էր դիտում հեռուստացույցով: Խոսում էր շշուկով՝ դողացող մատն ուղղելով իր երիտասարդ «ես»-ին, որը պահպանվել էր տեսագրության վրա: Նա 22 տարեկան է, տաքանում է ռինգի իր անկյունում ու ցատկոտելիս ձեռնոցները հպվում են ազդրերին: Ալին ապրում է ֆերմայում՝ Միչիգանի հարավում: Ասում են, որ 20-ականներին այդ ֆերման պատկանել է Ալ Կապոնեին[3]: Ալիի մտերիմ ընկերներից մեկը՝ իր մարտավկա Դրյու «Բունդինի» Բրաունը, մի անգամ ամբողջ ֆերման տակնուվրա է արել Կապոնեի թաղած գանձերը գտնելու հույսով: Բունդինին, որն ապրում էր Լոս Անջելեսի Օլիմպիա պողոտայում գտնվող էժան հյուրանոցներից մեկում, 1987-ին գլորվել է աստիճաններից: Որոշ ժամանակ անց հյուրանոցի

[1] Malcolm X – Մալքոլմ Իքս (1925-1965), ամերիկացի մահմեդական նախարար, մարդու իրավունքների պաշտպան:

[2] Գոնգ կամ կոչնակ – ազդարարում է ռաունդի սկիզբն ու վերջը:

[3] Alphonse Gabriel "Al" Capone – Ալֆոնս Գեբրիել «Ալ» Կապոնե (1899-1947), ամերիկացի գանգստեր: Կահույքի բիզնեսի անվան տակ Չիկագոյին մատակարարել է ալկոհոլային խմիչքներ այն ժամանակ, երբ ԱՄՆ-ում օրենքը խիստ է եղել: Կապոնեն նաև կաշառել է ծանրակշիռ քաղաքական գործիչներին:

մեջ: Նա կրում էր գլխանոցով թիկնոց: Հայացքն անվրդով էր, անտարբեր ու դատարկ: Մեռած մարդու հայացք էր: Մի մարդու, որը կյանքից ոչ մի լավ բան չէր ստացել ու ոչ մեկի լավություն չէր արել: Նա Կասիուս Քլեյին ևս ոչ մի լավություն չէր պատրաստվում անել:

Մայամիի մարզահամերգային համալիրի դահլիճում հավաքված գրեթե բոլոր մարզական լրագրողներն ակնկալում էին, որ Քլեյը երեկոն ավարտելու էր մեջքի վրա պառկած: *The New York Times* թերթի երիտասարդ մարզական լրագրող Ռոբերտ Լիպսայտին զանգահարեցին խմբագրությունից ու հանձնարարեցին ճշտել դահլիճից հիվանդանոց տանող ճանապարհը, որպեսզի նա կարողանար ավելի հեշտ կողմնորոշվել, երբ Քլեյը հիվանդանոցում հայտնվեր: Բուքմեյքերական ընկերությունների սահմանած գործակիցը 7:1 էր՝ ի վնաս Քլեյի, ու գրեթե հնարավոր չէր գտնել որևէ բուքմեյքերի, որը կհամաձայներ խաղադրույք ընդունել: Մենամարտի առավոտյան *New York Post* թերթը հրապարակեց երկրի ամենահայտնի կատակերգու Ջեքի Գլիսոնի սյունակը, որում ասվում էր. «Ենթադրում եմ, որ Սոնի Լիստոնը հաղթանակ է տանելու առաջին ռաունդի 18-րդ վայրկյանին՝ այդ ընթացքում նոկաուտի ենթարկելով նաև այն 3 մարտավկաներին, որոնց հետ այդ բացբերանը ռինգ դուրս կգա»: Նույնիսկ Լուիսվիլից Քլեյի հովանավորների խումբն էր աղետի պատրաստվում: Խմբի փաստաբան Գորդոն Դեյվիդսոնը ծանր բանակցություններ էր ունեցել Լիստոնի թիմի հետ՝ ենթադրելով, որ դա կարող էր լինել երիտասարդի վերջին մենամարտը: Դեյվիդսոնը հույս ուներ, որ Քլեյը գոնե «ողջ ու անվնաս» կմնա:

Նեշվիլում ուսանողների նստացույցը[1] (այդ տարի Հռոմում Ալին ոսկե մեդալ է նվաճել), «ազատության ավտոարշավները»[2], Վաշինգտոնի երթը[3], ուսանողների բողոքի ակցիաներն Օլբանիում, Ջիորջիայում և Միսիսիպիի համալսարանում (ծանր քաշային կարգի բռնցքամարտիկի նրա կարիերան այդ ժամանակ վերելք էր ապրում): Քլեյը ոչ թե պարզապես արձագանքում էր այդ ցնցումներին, այլ դա անում էր այնպես, որ հունից հանում էր բոլորին՝ սկսած սպիտակամորթ ռասիստներից մինչև Գունավոր բնակչության առաջընթացի աջակցման ազգային ասոցիացիայի[4] ղեկավարները: Նա փոխեց իր կրոնն ու անունը և իրեն ազատ հայտարարեց բոլոր կաղապարներից ու ակնկալիքներից: Կասիուս Քլեյը դարձավ Մուհամեդ Ալի: Գրեթե յուրաքանչյուր ամերիկացի Ալիի հանդեպ սիրով է լցված: Արտասովորն այն է, որ մարտիկը դարձավ սիրո խորհրդանիշ, թեև հավաքական ընկալման

[1] Նեշվիլում ուսանողների նստացույցը տևել է 2 ամիս, 3 շաբաթ և 6 օր՝ 1960 թ. փետրվարի 13-ից մայիսի 10-ը: Նեշվիլի ուսանողները պայքարում էին ռասայական խտրականության դեմ: Նեշվիլում գտնվող Ֆիսկի համալսարանը 1960-ականներին միակն էր, որտեղ սևամորթներին ընդունում էին, և նրանք զերծ էին տարատեսակ բռնություններից:

[2] 1960-ականներին ամերիկյան քաղաքացիական-իրավապաշտպանական շարժում՝ ի պաշտպանություն աֆրոամերիկացիների:

[3] Բողոքի խաղաղ ակցիա, որը տեղի է ունեցել Վաշինգտոնում 1963-ի օգոստոսի 28-ին: 200-300 հազար մարդ երթով քայլել է դեպի Լինքոլնի հուշարձան, որտեղ Մարտին Լյութեր Քինգը հանդես է եկել «Ես երազանք ունեմ» հայտնի ճառով: Ցույցի մասնակիցների մոտ 80 %-ն աֆրոամերիկացի էր, 20 %-ը՝ սպիտակամորթ և այլ ռասայի մարդ: Երթից հետո ընդունվել են աֆրոամերիկացիների համար հավասար իրավունքներ սահմանող օրենքներ:

[4] Գունավոր բնակչության աջակցման ազգային ասոցիացիա - Միացյալ Նահանգներում 1909 թ. հիմնված՝ քաղաքացիների իրավունքները պաշտպանող կազմակերպություն: Ասոցիացիայի անդամները ջանում էին աֆրոամերիկացիների համար հավասար պայմաններ ստեղծել և նրանց իրավունքներն ավելացնել: